# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿ ԳԵՐԱՊԱՏԻՎ Տ. ՍԻՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ

## ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՑՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՑՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑՒՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ԳԵՐԱՊԱՏԻՒ Տ. ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ, ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴՒՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հույժ ուրախալի է Մեզ համար, Սիոն Սրբազան, Ձեզ տեսնել ներկայի մեր բարձրաստիճան հոգևորականության արժանավորագույններու հույլին մեջ: Դում Ձեր ամբողջ կյանքը գիտցամ նվիրել լուսակրոն մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվույն, որուն միջոցով Ձեզ նման գիտակից կոչումով աշխատելու պատրաստակամություն ունեցող եկեղեցականներու առջև կբացվի նաև մեր հավատացյալ ժողովրդին ծառայելու լայն ու փառավոր ասպարեզ:

Մեծցած ու դաստիարակված Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց կրոնաբույր ու հավատարծարծ մթնոլորտին մեջ և ընդգրկած կուսակրոնության ասպարե-

զը, անձնվիրաբար հետևելով Ձեր հոգևորականի կոչումին, ո՛ւր որ ալ կանչվեցաք, Դուք փութացիք անվարան և հաջողեցաք արժեցնել Ձեր աշխատանքը և արդյունավորել զայն մեր եկեղեցվո և ժողովրդի հոգևոր կյանքի շինության ի խնդիր:

Կոչվելով Հարավային Ամերիկայի հայոց առաջնորդության, Դուք լավագույնս իրականացուցիք Ձեր վրա դրված հույսերը, ապա նշանակվեցաք Հայրապետական պատվիրակ, միավորեցիք Հարավային Ամերիկայի շորս անշատ բեմերը ընդհանուր կեդրոնի մը շուրջ, և Ձեր ցուցաբերած վարչական ունակությամբ կարողացաք այդ օտար բայց հյուրընկալ ափերուն վրա Հայաստանյայց եկեղեցին պահել իր արժանավայել բարձրության վրա: Մենք վստահ ենք, որ շնորհիվ Ձեզ նման լուսամիտ ու եվիրված առաջնորդներու, մեր վտարանդի հավատավոր ժողովուրդը, բեև հեռու Մայր Աթոռեն և Մայր Հայրենիքեն, հոգիով ու մտքով պիտի մնա կապված իր սրբություններուն, և մեր եկեղեցին, որպես Նոյի փրկարար տապան, պիտի հավաքե իր զավակները, զալու և օր մը կանգ առնելու հավերժական Մասիսի սեզ կատարին, ու տարածվելու Արարատյան դաշտի շորս կողմերը:

Որպես Հայրապետական պատվիրակ և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Դուք կնանդիսանաք մեր բանկագին գործակիցը և լավագույնս կկատարեք Մայր Աթոռի Ձեր վրա դրած հոգևոր պարտականությունները: Ձեր անդուլ աշխատանքներուն շնորհիվ, կազմակերպական լավ հիմքերու վրա է դրված Ձեր խնամքին հանձնված բեմը իր եկեղեցիներով, դպրոցներով, բեմական և եկեղեցական խորհուրդներով, մամուլով, որոնց շնորհիվ Հարավային Ամերիկայի հավատացյալ մեր ժողովրդի հոգիին մեջ միշտ վառ կմնա Քրիստոսի լույս հավատը և կենդանի՝ մեր մեծասքանչ լեզուն, անոր շրջներուն վրա:

Ի վարձատրություն Ձեր ասպվածահաճո գործունեության և ի քաջալերություն Ձեզ, հայրապետական Մեր այս կոնդակով կշնորհենք Ձեզ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ և կմաղթենք, որ այս բարձր կոչումը ավելցնե նոր փայլ ու հեղինակություն Ձեր անբասիր անվան վրա, տալով Ձերդ Գերաշնորհության գործունեության նոր մղում, ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո և ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովրդյան:

Կօրհնենք զՁեզ և կաղոթենք, որ մեր երկնավոր Հայրը պարգևե Ձեզ կյանքի երկար տարիներ՝ աշխատանքի պտղառատ և փառազարդ ճանապարհի վրա:

«Ողջ լերուք, զօրացեալ ի Հոգւոյն Սրբոյ և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ: Ամէն»:

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա. կոնդակս ի 15-ն յուլիսի
1956 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ԹՆԵ,
ի Ս. Էջմիածին: